Հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սերգեյ Առաքելյան

27.07.2023

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անդրանիկ Արամի Սիմոնյանի

«Օպերատիվ-հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրները հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում»
ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում օպերատիվ-հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրներին:

Ատենախոսը փորձ է կատարել մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հայրենական իրավագիտության մեջ առաջին համապարփակ գիտական հետազոտությունը:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը հանցագործության կանխարգելման համատեքստում օպերատիվ-հետախուզական և քննչական

մարմինների փոխգործողության և փոխգործակցության հետ կապված հարաբերություններն են: Հետազոտության առարկան քրեական գործով մինչդատական վարույթի պատշաճ կազմակերպմանը, քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցությանը վերաբերող իրավական նորմերն են, միջազգային լավագույն փորձը, առկա իրավակիրառ պրակտիկան և դրան վերաբերելի դոկտրինալ աղբյուրները:

Ուսումնասիրության նպատակը հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների համագործակցության ինստիտուցիոնալ կառուցակարգերի համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, դրա վերահմաստավորումը, շրջանառության մեջ տեսական նոր դրույթների, տերմինների և չափորոշիչների ներդնումը, ինչպես նաև կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Նշված նպատակին հասնելու համար սահմանվել են հետազոտման ենթակա այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- Հստակեցնել «Հանցագործության կանխարգելում» եզրույթի կիրառման առարկայական և ժամանակագրական շրջանակները:

- Վեր հանել քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցության իրավական, կազմակերպական հիմքերը և այդ առնչությամբ անել առավել արդյունավետ դարձնելուն միտված համապատասխան առաջարկներ:

- Վերլուծել հանցագործությունների կանխման ընդհանուր և հատուկ միջոցները և միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ արդյունավետորեն տեղայնացնել դրանք:

- Հանցագործությունների կանխարգելման համատեքստում քննարկել օպերատիվ-հետախուզական գործունեության նշանակությունը և այս իմաստով

առաջարկել քննչական մարմինների հետ առավել ներդաշնակ համագործակցությունն ապահովող կառուցակարգեր:

- Մշակել քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների փոխգործողության իրականացման անհրաժեշտ տեսական և մեթոդական հիմքեր, որոնց առավել բյուրեղացման դրսևորումները ներդնել օրենսդրական կարգավորումներում:

- Մշակել օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես ապացույց օգտագործելու օրենսդրական որոշակի չափորոշիչներ և դրանք ներդնել իրավակիրառ պրակտիկայում:

- Քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքի պատշաճ կազմակերպման առումով վերլուծել «Քննության պլանավորում» հասկացությունը և դրա համատեքստում անել փոխգործողության արդյունավետությանն ուղղված համապատասխան առաջարկներ:

Ըստ հեղինակի՝ հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ այն հայրենական իրավագիտության պատմության մեջ առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրություն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործակցության ինստիտուտին առնչվող տեսական և գործնական հիմնախնդիրները: Ընդ որում, նշված վերլուծությունները կատարվել են՝ հիմնվելով ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի, համապատասխան ոլորտներին վերաբերող իրավական ակտերի, առանձին օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրությունների և դատական պրակտիկայի համեմատահիրավական վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած կարծիքների, ՀՀ սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերի և դատական պրակտիկայի, վերաբերելի միջազգային

փաստաթղթերի համակարգային ուսումնասիրության վրա:

Հետազոտվել են հայրենական դատավարական գրականության մեջ ոչ ամբողջովին ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործակցության իրավական, կազմակերպական հիմքերը, մեթոդական չափորոշիչները, գործող իրավական կառուցակարգերը, այդ թվում՝ այս համատեքստում օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական բնույթն ու նշանակությունը: Առաջին անգամ ատենախոսության մակարդակում քննարկվել և վերլուծվել են հանցագործությունների կանխարգելման առնչությամբ իրավապահ առաքելություն իրականացնող մարմինների աշխատանքի համակարգման և փոխգործողության առանձնահատկությունները նաև համապատասխան ոլորտային մեթոդիկայի մշակման դիտանկյունից: Արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական ու գործնական առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ընդգրված 9 պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկայի նյութերի ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տալիս հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները:

Աշխատանքը հիմնականում գրված է գրագետ, իրավաբանական պատշաճ լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով ինը հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսական հետազոտության հիմնական արդյունքները:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրների առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունն ընդհանուր առմամբ կասկած չեն հարուցում:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Գլուխ 1-ի «Հանցագործությունների կանխարգելման իրավական բնույթը» վերտառությամբ 1-ին պարագրաֆում որոշակի անդրադարձ է կատարվել հանցանքների կանխման գործընթացում էական նշանակություն ունեցող հանգամանքի՝ կրկնահանցագործությունների վերլուծությանը, սակայն դրանց վիճակագրության վերաբերյալ դատողություններ, եզրահանգումներ և առաջարկություններ առկա չեն:

Կարծում ենք՝ վերը նշվածն աշխատանքում ներկայացնելով՝ հեղինակը կարող էր արժեքավոր առաջարկություն ներկայացնել այն համատեքստում, որ կրկնահանցագործությունների մասով Հայաստանի Հանրապետությունում վարվող վիճակագրությունը կատարելագործման անհրաժեշտություն ունի, ինչը հանցանքների կանխման գործընթացում կարևոր ուղենիշերից է:

2. Պաշտպանության ներկայացվող ատենախոսության 2-րդ գլխում, ըստ էության, փորձ է կատարվել ներկայացնել համակարգում և կոորդինացիա եզրույթների իմաստաբանական ու լեզվաբանական տարբերությունները, որոնց մասին ցանկալի կլինի իմանալ հեղինակի կարծիքը:

Բացի այդ, օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների համագործակցության տեսանկյունից աշխատանքում կարևոր շեշտադրում է կատարվել դատախազության, որպես համակարգող դեր ունենալու վերաբերյալ, սակայն դրա վերաբերյալ առավել խորը ուսումնասիրություն չի իրականացվել:

Կարծում ենք, որ աշխատանքն էլ ավելի կշահեր և իրավակիրառական պրակտիկայի համար կարևոր նշանակություն կունենար, եթե օպերատիվ-

հետախուզական գործունեության նկատմամբ դատախազական հսկողության կապակցությամբ վեր հանվեին առկա խնդիրները և դրանց առթիվ ներկայացվեին առաջարկություններ:

3. Նույն գլխի 2-րդ պարագրաֆում որպես առաջարկություն ներկայացված է, որ նոր քրեադատավարական իրավակարգավորումների համատեքստում հրատապ է նաև համապատասխան գերատեսչական իրավական ակտերի ընդունումը, որով կորոշակիացվի փոխգործողության քրեադատավարական և կազմակերպական տարրերի սահուն փոխհարաբերակցությունը:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթի ընթացքում կատարվող հետաքննության շրջանակներում օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի և աշխատակիցների հարաբերությունները վարույթն իրականացնող քննիչի, հսկող դատախազի և վերադաս դատախազի հետ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

Նման իրավակարգավորման պայմաններում՝ առավել ցածր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ-իրավական ակտով կարգավորումներ սահմանելու անհրաժեշտություն կարծում ենք չկա:

Միևնույն ժամանակ, նշված նկատառումները կրում են մասնավոր և խորհրդատվական բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևաբար, Անդրանիկ Արամի Սիմոնյանի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրները հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում» թեմայով ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և

գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արամի Սիմոնյանի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրները հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ:

Արդարադատության ակադեմիայի
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար,
գիտական խորհրդի քարտուղար՝ **Ա. Գալստյան**